

ՅԵՅՏԵՐԸ ԲՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԹԻԱՐԿ

ՄԱՆԿԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՕՐԱԳՐԻ

Կառավարութենից թոյլատրված նոր պրոգրամով, այս 1874 թուի Ապրիլ ամսից, պիտի հրատարակվի նորէն Մանկավարժական և Կրօնական Օրագիր Հայկական Աշխարհ, որ դադարեց 1871 թ. Մայիսին, Խմբագրողի Թիֆլիս թողնելու և Լշմիածին գնալու պատճառով: Հայկական Աշխարհի նպատակը կլինի — կրօնական ընթերցասիրութիւն տարածել Հայազն հասարակութեան մէջ, ազգային դպրոցների առաջադիմութեանը և մանուկների կրթութեանը նպաստել իւրովսանն, նոր Հայկական լեզուի մշակութեանը առանձին ուշք դարձնելով:

Հայկական Աշխարհ կբովանդակէ.

1. Մանկավարժական ընտիր յօդուածներ, մանկավարժութեան ներկայ դրութեան և զարգացման տեղեկութիւններով, զանազան լուսաւորված աշխարհների մէջ:

2. Օրիորդներին և պատանեակներին օգտաւէտ ընթերցանութեան համար գրվածներ պատմական, բնագիտական, կենսագրական, ճանապարհորդական, առողջապահական և այլն:

3. Կրօնական գրուածներ, Վարդեր, Ս. գրքից թարգմանութիւններ աշխարհաբար լեզուով:

4. Աշխարհաբար լեզուի կանոնների և ոճերի քննութիւններ:

5. Մանկավարժական և դպրոցական գրվածների քննութիւն:

Չօգևորականների և հոգևոր դպրոցների մասին տեղեկութիւններ: Մատենագրական տեղեկութիւններ: Չանազան մանր լուրեր:

Հայկական Աշխարհ կհրատարակվի ամիսը մի անգամ, իւրաքանչիւր տետրակը 2 թերթից կազմված, զուցէ երբեմն աւելի ևս: Այս տարի թէպէտ սկսում ենք Ապրիլից, սակայն տարեկան թերթերի քանակութիւնը (24—30) ամբողջութեամբ կներկայացնենք բաժանորդներին:

Տարեկան գինը 5 (հինգ) մանէթ է, կանխիկ վճարելէ: